

**ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԴԱՎՈՅԱՆ Ն. Դ.

Ճանաչողական լեզվաբանության և հոգեբանության, կառուցողական մանկավարժության շրջանակում ձևավորված ճանաչողական, ճանաչողական-հաղորդակցական, ճանաչողական-խոսությանին մոտեցումների կիրառման շնորհիվ օտար լեզուների դասավանդման ոլորտում ձևավորվել են ուսուցման նոր սկզբունքներ: Ժամանակակից անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ տեխնոլոգիաների մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությունը նույնպես հաստատում է այն կարծիքը, ըստ որի՝ ճանաչողական-կառուցողական տեսություններն ընկած են մանկավարժական նոր հարացույցի ձևավորման հիմքում:

Ուսուցման ճանաչողական մոտեցումը հիմնվում է ճանաչողական հոգեբանության, գիտակցականության սկզբունքի և հասարակական-կառուցողական մոտեցման վրա: Այն ենթադրում է ուսուցման գործընթացի մեջ սովորողների ակտիվ մասնակցություն: Ըստ այդմ՝ ճանաչողության գործընթացում սովորողների մեջ ձևավորվում է ճանաչողության որոշակի ուղի կամ ոճ (cognitive style): Օտար լեզուների ուսուցման մեջ մասնագետներն առանձնացնում են հետևյալ ճանաչողական ոճերը.

- դաշտային կամ բնագավառի անկախություն (field independence). դա ենթադրում է անձի՝ մի շարք շեղող գործոններից առարկան առանձնացնելու ունակությունը,

- կիսազնդեղից մեկի գերակայություն (left- and right-brain functioning). երբ գերիշխում է ձախ կիսագունդը, ապա մարդն ունի վերլուծական միտք, մտքերը շարադրում է դեղուկտիվ եղանակով, իսկ աջ կիսազնդի գերակայության ժամանակ մտածելակերպը ինդուկտիվ է:

Ըստ այդմ, ամեն մի սովորող ունի միայն իրեն հատուկ ճանաչողական ոճ, որով և պայմանավորվում է ուսումնառության ոճի և ուսումնական ռազմավարությունների ընտրությունը: Ճանաչողական մոտեցման պարագայում առանցքային նշանակություն ունի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունների ընտրության հիմնախնդիրը: Այդ համատեքստում կարևոր է հստակեցնել, թե ռազմավարության ինչ սահմանումներ են համարժեքորեն արտացոլում ուսուցման գործընթացի առանձնահատկությունները:

Չ. Բրուները «ռազմավարություն» հասկացությունը դիտարկում է որպես հոգեկերտվածքային գործառնությունների համակազմ¹:

¹ Brown H. Principles of language learning and teaching. Englewood Cliffs, NJ, 1994, Prentice Hall Regents, p. 104-113.

² Bruner J. S., Goodnow J. J. and Austin G. A. A Study of Thinking. Transaction Publishers, 1995. P.330.

Օտար լեզուների ուսուցման տեսական հիմքերը մշակելիս գիտնականները կարևորում են Տ. վան Դեյքի մոտեցումը, որն ստեղծել է խոսույթի մշակման ճանաչողական կադապարը, որով գիտնականը նկարագրել է տասից ավել բազմամակարդակ ռազմավարություններ՝ թեմայի ներմուծման, հասկանալու, մտածողության, խոսույթի, խոսույթի սերման և այլն³:

Հաղորդակցական մոտեցման ճանաչողական հայեցակետը դիտարկելու համար նպատակահարմար է ներկայացնել Ա. Ջալևսկայի տեսակետը, ըստ որի՝ «ճանաչողական ռազմավարություններն ընդունված է համարել այն հոգեկերտվածքային գործընթացները, որոնք ուղղված են տեղեկատվության մշակմանը ուսուցման նպատակով»⁴:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանաչողական ռազմավարություններն ընտրվում են ըստ ճանաչողական ոճերի: Երբ, հիմք ընդունելով Ջ. Ռուբինի և Հ. Ստերնի հայեցակետը, ճանաչողական ռազմավարությունների բնութագրերը համեմատում ենք հաղորդակցական մոտեցման սկզբունքների բովանդակային բնութագրերի հետ, բացահայտում ենք դրանց ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները: Այս հեղինակները ներկայացնում են օտար լեզվի տիրապետման ռազմավարությունների յոթ բնութագիր. 1. կռահելու ցանկություն և կռահումների ճշգրտություն, 2. շփվելու ուժեղ դրդապատճառ, 3. անկաշկանդություն, 4. ուշադրության դրսևորում լեզվական ձևի նկատմամբ, 5. գործընկերների որոնում՝ շփվելու նպատակով, 6. խոսքի ինքավերահսկողություն, 7. իմաստի կարևորում⁵:

Հետագայում Ջ. Օ'Մեյլին և նրա համախոհներն առաջարկեցին օտար լեզուների դասավանդման 24 ռազմավարություն, ինչպես, օրինակ՝ վերճանաչողական, որ ներառում է ուսուցման նախնական պլանավորումը, ուսուցման գործընթացի գիտակցումը և արդյունքների գնահատումը, ճանաչողական, որն ուղղակիորեն կապված է ուսումնական նյութի գործառնության կամ աշխատանքի հետ (կրկնություն, խմբավորում, դեդուկցիա, գրառում, առանցքային բառերի մտապահում և այլն), հանրազգայական, որ ենթադրում է համագործակցություն, ինչպես նաև փոխհատուցման, որը միտված է չհասկացածը ըմբռնելուն (վերահարցում, շրջասում, օրինակներ բերելը և այլն)⁶:

Ճանաչողական մոտեցումն օտար լեզուների ուսուցման ոլորտում ձևավորվել է ի հակադրություն վարքաբանականի: Այն հիմնվում է

³ Т. А. ван Дейк. Язык. Познание. Коммуникация, М., 1989, с. 312.

⁴ Залевская А. А. Психолингвистические проблемы учебного двуязычия: учеб. пособие, Тверь, 2002, с. 194.

⁵ Rubin J. What the "good language learner" can teach us, TESOL Quarterly, 1975, p. 41-51. Stern H. H. What can we learn from the good language learner? Canadian Modern Language Review, 1975, p. 304-318.

⁶ O'Malley J. M. Learning strategies in second language acquisition, New York, 1995, p. 276.

հետևյալ դրույթների վրա՝ մտածողության զարգացումը լեզվի տիրապետման անքակտելի մասն է: Լեզվի ուսուցումը չի հիմնվում միայն լեզվական միավորների ընկալման և մեխանիկական մտապահման վրա: Ըստ ճանաչողական-կառուցողական մոտեցման՝ սովորողները պետք է ներգրավվեն ճանաչողության ակտիվ գործընթացի մեջ, լինեն ուսուցման եռանդուն մասնակիցներ: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել նրանց անհատական հետաքրքրությունները և առանձնահատկությունները:

Մեթոդաբանների շրջանում ընդունված է ճանաչողական մոտեցումը քերականական-թարգմանական, գիտակցական մեթոդներով իրացնելու դրույթը: Մակայն հաղորդակցական մոտեցման սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա հիմքում նույնպես ընկած են ճանաչողականի հիմնադրույթները: Պատահական չէ, որ օտար լեզուների ուսուցման մեթոդաբանության մեջ հաճախակի է շրջանառվում հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը, որից ածանցվում են գործարանական-ճանաչողական, խոսության-ճանաչողական մոտեցումները:

Դրա հետ մեկտեղ, կարող ենք պնդել, որ հաղորդակցական մոտեցման կիրառումն օտար լեզուների ուսուցման ոլորտում նաև հակառակ միտումի ձևավորման սկիզբ դրեց, երբ մեթոդաբաններն սկսեցին թերագնահատել ճանաչողական գործընթացների դերը՝ հակադրելով ճանաչողական և զգայական ոլորտները:

Ըստ Ե. Կուբրյակովայի, «ճանաչողական լեզվաբանությունն ուսումնասիրում է լեզվի և հոգեկերտվածքային գործընթացների փոխազդեցության, փոխհարաբերությունների բոլոր տեսակները»:

Ընդհանուր առմամբ, ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը ձևավորվել է հումանիստականի շրջանակում, որը, ինչպես հայտնի է, նպաստեց անձնակենտրոն, անձնակողմնորոշիչ, անձնուղղորդ մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների ներդրմանը: Այսպես, Ք. Ռոջերսը առաջադրեց այն դրույթը, ըստ որի, մարդը նախ և առաջ զգայական էակ է⁷: Ք. Ռոջերսի և նրա համախոհների հայեցակարգերը նպաստեցին հաղորդակցական մոտեցման այն սկզբունքի ձևավորմանը, ըստ որի՝ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների ուսուցման դրական զգայական մթնոլորտի ստեղծման պայմանները և գործոնները: Ակնհայտ է, որ ուսուցման դրական զգայական մթնոլորտը անհրաժեշտ նախապայման է գիտելիքների արդյունավետ ներմուծման, յուրացման և ամրապնդման համար:

Հաղորդակցական մոտեցման ճանաչողական հայեցակետին ուղղակիորեն և անուղղակի անդրադարձել են տարբեր գիտնականներ: Ըստ Վ. Լիթվիուդի, դրա առանձնահատկություններից մեկը լեզվի գործառական տեսանկյունը լեզվի կառուցվածքային տեսակետի հետ

⁷ Кубрякова Е. С. Об установках когнитивной науки и актуальных проблемах когнитивной лингвистики (Известия АН. Серия литературы и языка, 2004, т. 63, N 3, с. 3-12).

⁸ Rogers C. Personal thoughts on Teaching and Learning, Merrill-Palmer Quart, 1957, b. V, 3 (Summer), p. 241-243.

միավորելն է: Սա նոր մոտեցում է ոչ միայն տեսական, այլև մեթոդաբանական հայեցակետից: Ըստ հեղինակի, այս տեսակետը կենտրոնանում է քերականական համակարգի վրա՝ նկարագրելով այն ուղիները, որոնցում լեզվական հիմնահարցերը միավորվում են⁹: Հաղորդակցական մոտեցման հիմնադրույթները ներկայացնելիս Լիթվուդը բազմիցս նշում է, որ այն կարող է հիմնավորվել և բացատրվել միայն մեթոդաբանական նոր մակարդակով: Նախ, հաղորդակցական օրինաչափությունները կարող են բացատրվել ոչ միայն կառուցվածքային, այլև, նախ և առաջ, գործառական մակարդակով, երբ անհրաժեշտություն է առաջանում ներմուծել և մեկնաբանել այն հասկացությունները («հասարակական նշանակություն», «հաղորդակցական նշանակություն», «հաղորդակցական իրազեկություն» և այլն), որոնք կառուցվածքային մոտեցման տեսանկյունից ներկայացված չեն որպես ուսումնասիրության առարկա:

Հաղորդակցական մոտեցման առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ խնդիր է դրվում ոչ միայն հասկանալ համապատասխան լեզվական միավորների գործառական նշանակությունները, այլև դրանք արտահայտել համապատասխան ենթատեքստերում: Հստակորեն տարաբաժանվում են «լեզվական իրազեկություն» (*linguistic competence*) և «հաղորդակցական իրազեկություն» (*communicative competence*) հասկացությունները: Հատկանշական է, որ հաղորդակցական իրազեկության կառուցվածքում կարևոր տեղ է զբաղեցնում ճանաչողական բաղադրամասը: Փաստորեն, ըստ հաղորդակցական մոտեցման, հաղորդակցական իրազեկությունն ապահովող երեք հիմնական պայմաններն են՝

- կառուցվածքները և բառապաշարը հասկանալու ունակությունը,
- լեզվական ձևերի հնարավոր հաղորդակցական գործառույթների մասին գիտելիքի առկայությունը,
- լեզվական և ոչ լեզվական գիտելիքները հարադրելու կարողությունը¹⁰:

Հաղորդակցական մոտեցման սկզբունքները վերլուծելու համար անհրաժեշտ է քննադծել, թե ինչ տեսանկյուններից են դրանք դիտարկվում: Արևմտյան մեթոդական ավանդույթը մեծ հաջողությունների է հասել այդ առումով: Այսինքն՝ հայտնի մեթոդաբանները (Վ. Լիթվուդ, Դ. Լարսեն-Ֆրիման, Հ. Բրաուն և այլք) հստակ նշում են, թե ամեն մի սկզբունք ինչ տեսական կամ մեթոդաբանական դիրքերից է դիտարկվում: Ֆրիմեն-Լարսենն, օրինակ, իր “*Techniques and Principles in Language Teaching*” դասագրքում յուրաքանչյուր սկզբունք ներկայացնում է մանկավարժական, հոգեբանական, լեզվաբանական և, իհարկե, մեթոդաբանական տեսանկյուններից: Դիտարկելով հաղորդակցական մոտեցումը՝ նա առանձնացնում է հիմնականում 16 սկզբունք: Հեղինակը դրանք վերլուծում է՝ առաջադրելով և պատասխանելով 10 հարցի:

⁹ Littlewood W. *Communicative Language Teaching: An Introduction*. Cambridge, 1981, chapter 1.

¹⁰ Նույն տեղում, գլ. 3:

Առաջին ընդհանրական է. «Որն է հաղորդակցական մոտեցումն օգտագործող ուսուցիչների դերը»¹¹: Կարելի է ասել, որ հարցը նախ և առաջ վերաբերում է գիտելիքների ներմուծման, ինչպես նաև յուրացման գործընթացին, և հեղինակը փորձում է պարզել, թե ինչպես և ինչ եղանակներով է ուսուցիչը նպաստում կամ խոչընդոտում սովորողների հաղորդակցական իրազեկության ձևավորմանը:

Երկրորդ հարցը նույնպես դիդակտիկական ուղղվածություն ունի՝ որոնք են ուսուցչի և աշակերտի դերերն՝ ըստ հաղորդակցական մոտեցման: Ուսուցիչը, ըստ Դ. Լարսեն-Ֆրիմանի, պետք է հեշտացնի աշակերտների ուսուցման գործընթացը, և նրա հիմնական դերերից է հաղորդակցությանը նպաստող իրադրություններ ստեղծելը: Մի դեպքում նա խորհրդատու է: Երբեմն նա համահաղորդակցվող է¹²: Ասվածից հետևում է, որ գիտնականը շեշտը դնում է գիտելիքների յուրացման զգայական ոլորտի վրա: Դրա հետ մեկտեղ, հնարավոր չէ դրական զգայական մթնոլորտ ստեղծել առանց հաշվի առնելու սովորողների ճանաչողական ոճը, հետաքրքրությունները, նախասիրությունները, դրդապատճառները, դասավանդողի ուսուցման ոճը, նրա կողմից կիրառվող մեթոդները:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից կարևորվում է այն, որ սովորողները գիտելիքները յուրացնում են հաղորդակցվելով: Եվ քանի որ ուսուցիչը գիտելիքի միակ աղբյուրը չէ, ուստի սովորողները հեշտությամբ կարող են իրենց սեփական ուսուցումը կազմակերպել՝ նախաձեռնելով ճանաչողական ոճը:

Երրորդ՝ «Որո՞նք են դասավանդման և ուսումնառության գործընթացի բնութագրերը» հարցադրման մեջ հանգուցային են «հաղորդակցական մտադրություն», «դերասյուժետային խաղեր», «խնդրահարույց առաջադրանքներ» հասկացությունները: Իրական հաղորդակցության կադապրման անհրաժեշտ պայման են համարվում ընտրություն կատարելու հնարավորություն տալը, ինչպես նաև իրական նյութերի [լեզվանյութի (authentic material)] օգտագործումը: Այս պարագայում ճանաչողական բաղադրամասը գերակայում է, և իրական լեզվական միջավայրում է ձևավորվում անձի ճանաչողական դաշտը:

Չորրորդ կետը դարձյալ վերաբերում է աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների բնույթին, ինչը նոր բովանդակություն է ստանում, երբ հեղինակը սկսում է խոսել աշակերտ-աշակերտ հարաբերությունների մասին: Ինչպես նշեցինք, ուսուցիչը հաղորդակցական իրադրությունների նախաձեռնողն է: Հաղորդակցական մոտեցման բովանդակային առանձնահատկություններն ընկալելու համար կարևոր է իրար հետ հաղորդակցվող աշակերտների մեծ քանակությունը:

Հինգերորդ հարցը հոգեբանական է, վերաբերում է ուսանողների զգացմունքներին: Ըստ Լարսեն-Ֆրիմանի, օտար լեզու սովորելիս

¹¹ Larsen-Freeman D. *Techniques and principles in language teaching*, N.Y., 1986, 131.

¹² Նույն տեղում:

աշակերտները պիտի ունենան լուրջ դրդապատճառներ¹³: Ճանաչողական հոգեբանության տեսանկյունից նույնպես զգայական ոլորտը ցանկացած ճանաչողական գործընթացի իրականացման անհրաժեշտ պայման է և բաղադրամաս:

Դասավանդողները միայն գիտելիքի աղբյուր չեն, նրանք հնարավորություն են ընձեռում, որ ուսանողներն անկաշկանդ արտահայտեն իրենց հայացքները և կարծիքները: Ըստ Վ. Լիթլվուդի, դա ուսանողներին օգնում է «օտար լեզուն ինտեգրել իրենց սեփական անձին, և այդպես զգալն ավելի ապահով է»¹⁴:

Վեցերորդ հարցը վերաբերում է լեզվի և մշակույթի հարաբերակցությանը. մշակութային գիտելիքները լեզվական գիտելիքների հենքն են: Ըստ այդմ, լեզվական իրազեկությունը՝ որպես գիտելիք ձևերի և նշանակությունների մասին, հաղորդակցական իրազեկության մի մասն է կազմում: Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հաղորդակցական իրազեկության գործառույթները ճանաչողական ոճերի ընտրության համատեքստում: Սովորողը ոչ միայն ճանաչողական, այլև վերձանաչողական գործառույթներ է իրականացնում: Նա պետք է հստակ պատկերացնի, թե օտար լեզուն յուրացնելիս լեզվական ինչ ձևերի, նշանակությունների և գործառույթների հետ գործ ունի: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա այն ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային հաղորդակցության հիմքն է և պետք է ուսումնասիրվի ոչ միայն գույզահեռաբար, այլև ճանաչողական ռազմավարությունների հստակ կիրառմամբ:

Յոթերորդն առնչվում է օտար լեզվի յուրացման գործընթացում լեզվի և լեզվական հմտությունների դերին: Ըստ հաղորդակցական մոտեցման, լեզվական գործառույթները գերադասվում են լեզվական ձևերից: Ինչպես արդեն նշվեց, ամեն մի գործառույթի համար ներմուծվում են բազմաթիվ ձևեր: Օրինակ, ինչ-որ բան խնդրելիս աշակերտները պիտի սովորեն “would you...?” և “could you...?”, ավելի բարձր, խոսքային կատարյալ կարողություններ և հմտություններ ունեցող աշակերտները պիտի սովորեն “I wonder if you would mind...?” ձևերը¹⁵: Այստեղ գործ ունենք ճանաչողության լեզվամշակութային հայեցակետի հետ:

Ութերորդը վերաբերում է ուսանողների մայրենի լեզվին: Սկզբունքային նշանակություն ունի այն փաստը, որ ուսանողների մայրենի լեզուն առանձնահատուկ դեր չունի հաղորդակցական մոտեցման համար: Ուսուցանվող լեզուն պիտի օգտագործվի ոչ միայն հաղորդակցական գործունեության ընթացքում, այլև, օրինակի համար, այդ գործունեությունն աշակերտներին բացատրելիս կամ տնային հանձնարարությունը կատարելիս: Ուսանողները պիտի համոզված լինեն, որ այս կամ այն վարժությունն անելիս ուսուցանվող լեզուն «հաղորդակցության անիվն է» և ոչ թե առարկան¹⁶:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 134:

¹⁶ Նույն տեղում:

Բններորդ: Ուսուցիչը գնահատում է ուսանողների ոչ միայն ճիշտ, այլև սահուն խոսքը: Միշտ չէ, որ քերականական կառույցները և բառապաշարը յուրացրած ուսանողը լավագույն հաղորդակիցն է: Հետաքրքիրն այն է, որ թեստը նույնպես հաղորդակցական է, այսինքն՝ գնահատելիս ուսուցիչը կամ խորհրդատու է, կամ հաղորդակցվող-գրուցակից (co-communicator):

Տասներորդ հարցը, ինչպես իններորդը, մեթոդական է: Բառաձևերը ճիշտ օգտագործելուն վերաբերող սխալները ներելի են և դիտարկվում են որպես հաղորդակցական հմտությունների զարգացման բնական արդյունք: Ուսանողները կարող են ունենալ լեզվական սահմանափակ գիտելիքներ, բայց հաջողությամբ հաղորդակցվել:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը ոչ միայն տարբեր մեթոդներին համապատասխանող սկզբունքների, այլև մանկավարժական, դիդակտիկական, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական այլ և այլ հայեցակետերի համադրումն է:

Հաղորդակցական սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք դիտարկվում են գերազանցապես մեթոդական, դիդակտիկական, հոգեբանական, հանրալեզվաբանական տեսանկյուններից:

Մեթոդական մակարդակում խնդիր է դրվել ներկայացնել ուսումնական նյութի հետ աշխատանքի ընթացակարգերը, տեքստերի և վարժությունների ընտրության սկզբունքները:

Դիդակտիկական մակարդակում փորձ է արվում դիդակտիկական սկզբունքները վերագնահատել և հիմնավորել իրազեկային, մասնավորապես հաղորդակցական մոտեցման տեսանկյունից:

Հոգեբանական մակարդակում կարևորվում է ճանաչողական մոտեցման դերը, երբ հաղորդակցականին վերաբերող յուրաքանչյուր սկզբունք հիմնավորվում է ըստ ճանաչողական ոճերի և ռազմավարությունների: Ակնհայտ է, որ թե՛ վերձանաչողական, թե՛ ճանաչողական, թե՛ հանրազգայական ռազմավարություններն առանցքային դեր են խաղում ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ հարաբերությունների դինամիկան ներկայացնելու, դասի ժամանակ ինտերակտիվ, համագործակցային, դրական զգայական մթնոլորտ ստեղծելու համատեքստում:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման արդյունավետությունը հիմնավորվում է նաև աշակերտակենտրոն, անձնակենտրոն ուսուցման կադապարի կիրառմամբ, երբ ուսուցիչը օժանդակող է, աջակցող, գործընկեր և խորհրդատու:

Ուսուցման և ուսումնառության փոխադարձ կապն ապահովելու կարևոր պայման է վերձանաչողական ռազմավարությունների կիրառումը: Էական է նաև այն սկզբունքը, որը վերաբերում սովորողների զգացմունքներին, զգայական ոլորտին: Այդ սկզբունքի կիրառումը ենթադրում է, նախ և առաջ, զգայական ռազմավարությունների կիրառում, երբ խնդիր է դրվում ստեղծել և ապահովել դրական զգայական մթնոլորտ:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցման հետևորդները հավասարապես կարևորում են ուսուցման գործընթացում թե՛ մտավոր ճանաչողական, թե՛ զգայական ոլորտները: Հաղորդակցականի սկզբունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնվում են թե՛ մտավոր-ճանաչողական, թե՛ զգայական ոլորտների վրա:

Կարելի է պնդել, որ ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը հնարավորություն է ընձեռում հաղորդակցականի սկզբունքները դիտարկել մեթոդաբանական տարբեր, մասնավորապես վերճանաչողական տեսանկյուններից, երբ ուսուցման այս կամ սկզբունքը քննում ենք կառուցվածքային կամ գործառական մակարդակներում, որոնք հնարավոր է նկարագրել, ներկայացնել նախ և առաջ ճանաչողական մակարդակում:

**КОГНИТИВНО-КОММУНИКАТИВНЫЙ
ПОДХОД К ПРОЦЕССУ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННЫМ ЯЗЫКАМ**

ДАВОЯН Н. Д.

Резюме

Анализ основных принципов коммуникативного подхода с точки зрения когнитивно-коммуникативных реалий выявляет определенные методические, дидактические, психологические факторы формирования знаний у учащихся с учетом познавательных стилей и стратегий. Соотношение познавательной и эмоциональной сфер нацелено на применение метакогнитивных, когнитивных и социально-эмоциональных стратегий в процессе обучения иностранным языкам.

**COGNITIVE-COMMUNICATIVE
APPROACH TO TEACHING FOREIGN LANGUAGES**

N. DAVOYAN

Abstract

The present paper considers the main principles of communicative approach from the point of view of cognitive-communicative approach. It determines methodological, didactic, psychological factors in forming students' knowledge taking into account cognitive styles and strategies. The paper highlights the correlation of cognitive and emotional spheres aimed at using metacognitive, cognitive and social-emotional strategies in teaching foreign languages.